

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 8

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021-2022 ուս. տարվա  
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

04 հունիսի 2022թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

**Նախագահ՝** ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյան

**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի հայցորդ Նաիրա Կամոյի Շաբոյանի «Դրախտածառը (Cotinus coggygria Scop.) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

**Ղեկավար՝** դ.գ.դ. Նաիրա Բաբկենի Զիչոյան

**Զեկուցող՝** Նաիրա Շաբոյան

**2. Ընթացիկ հարցեր**

- 2.1. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված հայտի երաշխավորման հարցը:

## ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի հայցորդ Նաիրա Կամոյի Շաբոյանի «Դրախտածառը (*Cotinus coggygria Scop.*) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

**Լսեցին՝** Նաիրա Շաբոյանին, ով ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հնչեցված որոշ հարցերի:

**Ելույթ ունեցան՝** գիտխորհրդի նախագահ Ս. Վարդապետյանը, անդամներ՝ ք.գ.թ. ք.գ.թ Ա. Մկրտչյանը, ք.գ.թ Ա. Գեոլչանյանը Ս. Պետրոսյանը, ք.գ.թ Կ. Պետրոսյանը, ք.գ.թ. Ժ. Սարգսյանը, կ.գ.թ. Ն. Հովհաննիսյանը, ովքեր նշեցին, որ Ն. Շաբոյանի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք, սակայն դեռ կան մի շարք չպարզաբանված հարցեր, լավ չի արտացոլված աշխատանքի գիտական նորույթը, կատարված գիտահետազոտական և վերլուծական աշխատանքներում հեղինակի անձնական մասնակցությունը:

Ելույթ ունեցավ նաև գիտքարտուղար Ա. Դադայանը, ով նշեց, որ ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կարծիք են ներկայացրել ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ն. Զաքարյանը և ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի որակի հսկման լաբորատորիայի ավագ փորձագետ ք.գ.թ Վ. Կիրակոսյանը (կարծիքները կցվում են), ովքեր նշել են, որ չնայած ատենախոսական աշխատանքի շրջանակներում կատարվել է մեծ ծավալի աշխատանք, սակայն կան մի շարք չպարզաբանված հարցեր, թերություններ և միայն դրանց շտկումից հետո աշխատանքը կարելի է երաշխավորել պաշտպանության:

**Որոշեցին՝** (միաձայն) հայցորդ Նաիրա Շաբոյանի կողմից ներկայացված ատենախոսական աշխատանքը կարող է երաշխավորվել պաշտպանության միայն նշված բացթողումները և թերությունները շտկելուց և ևս մեկ անգամ գիտխորհրդին ներկայացնելուց հետո:

## 2. Ընթացիկ հարցեր

2.1. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված հայտի երաշխավորման հարցը:

**Լսեցին՝** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանին, ով ներկայացրեց «Ֆտորի քանակի որոշում ՀՀ կենցաղային ջրերում և համեմատական վերլուծություն» վերնագրով նախագիծը: Այն ներկայացված է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2022» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար: Ա. Ծատուրյանը մասնավորապես նշեց, որ նախագծի նպատակն է մշակել ֆտորի նույնականացման իոնային քրոմատոգրաֆիայի բարձր ընտրողականությամբ մեթոդ, իրականացնել մեթոդի կիրառելիության փորձաքննություն միջազգային ուղեցույցների համաձայն, ինչպես նաև՝ Հայաստանի տարբեր մարզերի ջրային ռեսուրսներում ֆտորի նույնականացում և ստացված արդյունքների հիման վրա քարտեզագրում:

**Որոշեցին՝** (միաձայն) երաշխավորել Ա. Ծատուրյանի կողմից ներկայացված թեման՝ վերը նշված մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

**Գիտական խորհրդի նախագահ՝**  
ք.գ.թ., դոցենտ

**Ս. Վարդապետյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝**  
ք.գ.թ., դոցենտ

**Ա. Դադայան**